ԿԱՐԾԻՔ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթի ընթացակարգի վերաբերյալ

Նախաբան

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) անդամներին «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակում է Ազգային ժողովը՝ վեց տարի ժամկետով: Հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուի ընտրության համար Ազգային ժողովի նախագահը ձևավորում է մրցութային խորհուրդ (այսուհետ նաև՝ Խորհուրդ):[1]

Հանձնաժողովի անդամի թափուր հաստիքի համալրման մրցույթն (այսուհետ նաև՝ Մրցույթ) անցկացվում է երկու փուլով, որից առաջինը փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգման փուլն է, երկրորդը՝ հարցազրույցի:[2] Խորհուրդը հարցազրույցի փուլի ավարտից հետո կազմում և Ազգային ժողովի նախագահին է ներկայացնում մրցույթում հաղթող ճանաչված թեկնածուների ցուցակը:[3]

2023 թվականին «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն (ԹԻՀԿ) դիմել էր Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարին և նախագահին՝ խնդրելով ապահովել իր ներկայացուցչի՝ դիտորդի կարգավիճակով մասնակցությունը Հանձնաժողովի անդամի թափուր հաստիքի համալրման մրցույթի հարցազրույցի փուլին: Ազգային ժողովի աշխատակազմի կողմից նման դիմումը մերժվել էր՝ հղում կատարելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի պաշտոնում թեկնածուի ընտրության համար մրցույթի կազմակերպման և անցկացման» կարգի 14-րդ կետի դրույթին, ըստ որի՝ բացի տվյալ պահին հարցազրույցին մասնակցող հավակնորդից այլ անձանց չի թույլատրվում ներկա գտնվել հարցազրույցի անցկացման սենյակում:

Վերոգրյալով պայմանավորված ԹԻՀԿ-ը դիմել է ՀՀ վարչական դատարան՝ պահանջելով ոչ իրավաչափ ճանաչել ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի գործողությունը, որով ԹԻՀԿ դիտորդի մասնակցությունը Մրցույթի հարցազրույցի փուլին մերժվել էր:

ՀՀ Վարչական դատարանը բավարարել էր «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի հայցն ընդդեմ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի՝ ոչ իրավաչափ ճանաչելով Հանձնաժողովի անդամի թափուր հաստիքի համալրման մրցույթի հարցազրույցի փուլին հայցվորի ներկայացուցչի մասնակցությունը դիտորդի կարգավիճակով մերժելու գործողությունները:

Դատարանը թիվ ՎԴ/10353/05/23 վարչական գործով կայացրած վճռով արձանագրել էր, որ դիմողի՝ տեղեկատվություն ստանալու իրավունքը սահմանափակվել է օրենքով նախատեսված չլինելու պայմաններում: Ըստ դատարանի՝ սահմանափակման հիմք չի կարող լինել այն պնդումը, որ հարցազրույցի ընթացքում կարող են բացահայտվել պաշտոնին հավակնող անձի

---

[1] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, հոդված 9:
[2] Նույն տեղում, հոդված 10.2, մաս 9:
[3] Նույն տեղում, հոդված 10.1, մաս 1, կետ 6:

ընտանեկան և անձնական կյանքին վերաբերող տվյալներ, քանի որ խոսքը պետական պաշտոն զբաղեցնել հավակնելու մասին է, իսկ այդ ընթացակարգը ժողովրդավարական հասարակությունում պետք է լինի բաց և թափանցիկ: Դատարանը շեշտել է, որ խնդրո առարկա տեղեկությունները չեն կարող ենթակա լինել պաշտպանության որպես անձնական տվյալներ այնքանով, որքանով դրանք վերաբերում են ոչ թե թեկնածուների միջանձնային հարաբերություններում դրսևորվող անձնական կյանքին, այլ նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման պիտանելիությունը գնահատող որակներին:

Նշված դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելուց հետո ԹԻՀԿ-ը և Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամը դիմել են Ազգային ժողովին դիտորդի կարգավիճակով մասնակցելու համար Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի համալրման համար հայտարարված մրցույթին: Խորհրդի 2025 թ. սեպտեմբերի 4-ի թիվ ՄԽ-Ո-09-Ա և ՄԽ-Ո-10-Ա որոշումների համաձայն՝ ԹԻՀԿ-ի և Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամի ներկայացուցիչներին հնարավորություն է տրվել հեռավար կարգով ԱԺ նստավայրում դիտորդի կարգավիճակով հետևել 2025 թ. սեպտեմբերի 17-ին կայանալիք Մրցույթի հարցազրույցի փուլին:

Մրցույթի հարցազրույցի փուլի ընդհանուր նկարագրություն

Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցույթի կազմակերպման և անցկացման կարգով սահմանվում է, որ Մրցույթի 2-րդ՝ Հարցազրույցի փուլի անցկացման վայր է սահմանվում Ազգային ժողովը:[4]

Մրցույթի հարցազրույցի փուլը կազմված է երկու մասից՝

1. Հավակնորդի մասնագիտական փորձի, անձնական որակների և հմտությունների ուսումնասիրություն,
2. Հանձնաժողովի անդամի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջների իմացության ուսումնասիրություն:[5]

Յուրաքանչյուր հավակնորդ նախապես հայտարարված ժամին ներկայանում է հարցազրույցի անցկացման վայր: Հավակնորդները հարցազրույցի են հրավիրվում անհատապես՝ ըստ Խորհրդի կողմից կազմված ժամանակացույցի:[6] Բացի տվյալ պահին հարցազրույցին մասնակցող հավակնորդից, այլ անձանց չի թույլատրվում ներկա գտնվել հարցազրույցի անցկացման սենյակում:[7]
Խորհրդի որոշմամբ հաստատված աշխատակարգի[8] համաձայն՝ Խորհրդի նիստերը անցկացվում են դռնփակ, եթե Խորհուրդը նիստերը դռնբաց անցկացնելու մասին որոշում չի կայացնում:

Հավանաբար, Խորհրդի որոշմամբ սահմանված կարգը չխախտելու նպատակով Խորհրդի կողմից որոշում էր կայացվել դիտորդների մուտքը Մրցույթի անցկացման սենյակ

[4] Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհրդի 17.09.2025 թ. թիվ ՄԽ-Ո-04 որոշում, հավելված, կետ 11:
[5] Նույն տեղում, կետ 16:
[6] Նույն տեղում, կետ 15:
[7] Նույն տեղում, կետ 14:
[8] Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհրդի 17.09.2025 թ. թիվ ՄԽ-Ո-01 որոշում, հավելված, կետ 9:

սահմանափակել՝ վերջիններիս հնարավորություն ընձեռելով բացառապես հեռավար կարգով հետևել Մրցույթի ընթացքին: Դիտորդները գտնվում էին առանձին սենյակում և գործընթացին հետևում էին ուղիղ հեռարձակմամբ՝ էկրանի միջոցով՝ առանց հավակնորդների հետ հաղորդակցվելու և մրցույթի ընթացքի տեսաձայնագրման հնարավորության:

Դիտարկումներ և առաջարկություններ

Որպես դիտորդ մասնակցելով 2025 թ. սեպտեմբերի 17-ին կայացած Մրցույթին՝ կազմակերպություններն արձանագրել են, որ, ընդհանուր առմամբ, Մրցույթը լավ էր կազմակերպված և համակարգված, ինչը հնարավորություն է տվել գործընթացն անցկացնել առանց խափանումների ու անկանխատեսելի իրավիճակների:

Միաժամանակ, կազմակերպություններն արձանագրել են մի շարք խնդիրներ, որոնք կարող են որոշ առումներով խոցելի դարձնել գործընթացի արժանահավատությունը: Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամների ընտրության մրցութային գործընթացն առավել արդյունավետ կազմակերպելու և գործընթացները լավարկելու նպատակով ստորև ներկայացնում ենք մեր դիտարկումները և առաջարկությունները՝ ակնկալելով հետագայում կայանալիք մրցույթներում դրանց գործնական կիրառումը:

1. Տեսանկարահանման և հեռարձակման ապահովում

Մրցույթի գործընթացի հեռարձակման ընթացքում որևէ անձի մոտ տեղադրված խոսափողը միացված լինելու դեպքում էկրանի վրա խոշոր պլանով ցուցադրվում էր տվյալ անձի պատկերը և լսվում էր վերջինիս ձայնը, իսկ բոլոր խոսափողների անջատված լինելու պարագայում ձայնը լսելի չէր դիտորդներին, իսկ էկրանին ցուցադրվում էր սենյակի ընդհանուր պատկերը:

Այս առումով, թեև Խորհրդի անդամները հիմնականում հետևողական էին խոսափողները միացված պահելու հարցում, այնուամենայնիվ որոշ հազվադեպ դեպքերում առանձին խոսակցություններ դիտորդներին հասանելի չէին: Դեպքերը քիչ էին և այս մրցույթի արդյունքների վրա ազդեցություն չունեցող, սակայն ցանկալի է ապագայում բացառել նման իրավիճակները:

Առաջարկ

- Հետևողական լինել, որպեսզի Մրցույթի ընթացքում խոսափողները միացված լինեն Խորհրդի անդամների և հավակնորդի խոսելու պահին, և անջատված լինեն Մրցույթի մնացած ամբողջ ընթացքում:

2. Թեստավորման տոմսերի և դրանց բովանդակության թափանցիկություն

Հանձնաժողովի անդամի կարգավիճակին վերաբերող հիմնարար իրավական ակտերի պահանջների իմացության ստուգումը կատարվում է հրապարակված հարցարանի հարցերը վիճակահանությամբ հավակնորդի կողմից ընտրելու միջոցով:[9]

Հարցազրույցի փուլում հարցարանի հարցերը՝ թղթյա հարցաթերթիկների տեսքով, հակառակ կողմով՝ այնպես, որ բացառվի հարցերի տեսանելիությունը, շարված էին առանձին սեղանի վրա:

[9] Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհրդի 17.09.2025 թ. թիվ ՄԽ-Ո-04 որոշում, հավելված, կետ 21:

Այնուամենայնիվ, դրանց նախապես դասավորված լինելու հանգամանքը կարող էր որոշակի կասկած հարուցել պատահականության սկզբունքի պահպանման տեսանկյունից: Հավակնորդը տոմսը վերցնելուց հետո բարձրաձայնում էր վերցրած տոմսի համարը, սակայն դիտորդները հնարավորություն չունեին անմիջականորեն տեսնելու տոմսում ներառված հարցերի բովանդակությունը, վերջիններս ծանոթանում են դրան միայն հավակնորդի կողմից ընթերցելու միջոցով:

Միաժամանակ, խոսափողի միացված լինելու և Խորհրդի անդամներից որևէ մեկին էկրանով խոշոր պլանով ցույց տալու հետևանքով որոշ դեպքերում դիտորդներին հասանելի չէր թեկնածուի կողմից թեստավորման տոմսի ընտրության պահը:

Առաջարկ

- Տոմսերը տեղադրել փակ տարայի մեջ և յուրաքանչյուր թեկնածուի ներկայությամբ խառնել կամ որևէ այլ եղանակով ապահովել, որպեսզի թեկնածուն հնարավորություն ունենա անմիջականորեն և պատահականորեն ընտրել տոմսը՝ հնարավորինս նվազեցնելով տոմսերի նախադասավորման ռիսկը:
- Ապահովել դիտորդների անմիջական հասանելիությունը ընտրված տոմսին՝ ցուցադրելով այն էկրանին կամ նախապես տրամադրելով դիտորդներին տոմսերի առանձին փաթեթ կամ ցանկը՝ համապատասխան համարակալմամբ:
- Հետևողական լինել, որպեսզի թեստավորման տոմսի ընտրության պահին բոլոր խուսափողները լինեն անջատված և էկրանի վրա դիտորդներին հասանելի լինի սրահի ընդհանուր պատկերը՝ թեկնածուի և տոմսերի լիարժեք տեսանելիությամբ:

3. Հարցերի բովանդակության հավասարակշռություն

Հարցազրույցի փուլի անցկացման նպատակով Խորհուրդը 17.09.2025 թ. թիվ ՄԽ-Ո-03 որոշմամբ սահմանել է թեկնածուի՝ Հանձնաժողովի անդամի պաշտոնի համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքների ստուգման նպատակով կազմված հարցերից բաղկացած հարցարանը (այսուհետ՝ Հարցարան):[10]

Հարկ է նկատել, որ Խորհրդի որոշմամբ հաստատված Հարցարանի հարցերի գերակշիռ մասն ունի նեղ մասնագիտական իրավական ուղղվածություն: Ճիշտ է, օրենքով[11] Հանձնաժողովի առնվազն մեկ անդամի համար սահմանվում է իրավաբանական կրթություն ունենալու պահանջ, սակայն մեկ այլ անդամի համար սահմանված է տնտեսագիտական կրթություն ունենալու պահանջ, իսկ մյուս երեք անդամների համար ընդհանրապես հատուկ մասնագիտական որակավորման պահանջ սահմանված չէ: Հետևաբար, Հանձնաժողովի անդամի թեկնածուի մոտ նեղ մասնագիտական իրավական գիտելիքների առկայության կամ բացակայության փաստը չի կարող դրվել թեկնածուի ընտրության չափանիշների հիմքում:

Ի լրումն Հարցարանում ներառված հարցերի, Խորհրդի անդամների կողմից հնչեցվող հարցադրումները ևս հաճախ կրել են խիստ նեղ իրավական բնույթ, ինչը չի բխում Հանձնաժողովի անդամի պաշտոնից բխող լիազորությունների և կոմպետենցիաների ստուգման

---

[10] Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհրդի 17.09.2025 թ. թիվ ՄԽ-Ո-03 որոշում:

[11] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, հոդված 10, մաս 2:

նպատակից և կարող է անհամաչափ և անհարկի բարդություն ստեղծել տնտեսագիտական կամ այլ ոլորտի կրթություն ունեցող թեկնածուների համար:

Առաջարկ

- Վերանայել Հարցարանի հարցերի բովանդակությունը՝ ապահովելով, որ վերջիններս առավելագույնս բխեն Հանձնաժողովի անդամի լիազորություններից, Հանձնաժողովի անդամի գործունեության համար անհրաժեշտ կոմպետենցիաներից և Հանձնաժողովի անդամին ներկայացվող ընդհանուր պահանջներից: Հարցարանում ընդգրկել բազային իրավական և կոռուպցիայի կանխարգելման ոլորտին վերաբերող հարցեր, որոնք հասանելի կլինեն բոլոր մասնագիտությունների ներկայացուցիչներին:
- Բացառել Խորհրդի անդամների կողմից հնչեցվող հարցերի չափազանց նեղ մասնագիտական ուղղվածությունը և նախապատվությունը տալ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անմիջական լիազորությունների շրջանակին վերաբերելի հարցերին:

4. Օբյեկտիվ և չեզոք հարցադրումների ապահովում

Հանձնաժողովի անդամի պաշտոնում արդյունավետ գործելու համար անհրաժեշտ անձնական հմտություններն ու որակները գնահատելու, Հանձնաժողովի անդամ դառնալու շարժառիթն ու ակնկալիքը պարզելու նպատակով Խորհրդի անդամները կարող են հարցեր տալ հավակնորդին: Խորհուրդն իրավասու է նաև հավակնորդից պարզաբանումներ պահանջելու բարեվարքության վերաբերյալ հարցաթերթիկում լրացված տվյալների վերաբերյալ:[12]

Դիտորդների կողմից նկատվել է, որ որոշ դեպքերում Խորհրդի անդամները արտահայտել են ենթադրական կամ սուբյեկտիվ բնույթի ոչ պատշաճ դիտարկումներ, ինչպիսիք են օրինակ՝ «Ձեր փորձը ավելի օգտակար կլիներ այլ պետական մարմնում», «գուցե արժի գնալ այլ պետական մարմին», «իմ պատկերացմամբ ձեր նախկին գործունեությունը այդքան էլ չի համապատասխանում առաջադրվող պաշտոնին» և այլն:

Առաջարկ

- Ապահովել հարցադրումների օբյեկտիվությունը, բացառել խորհրդի անդամների անձնական կարծիքների և ենթադրությունների հնչեցումը:
- Առաջնահերթություն տալ հավակնորդի որակավորման, փորձի և գիտելիքների բացահայտմանն ու գնահատմանն ուղղված հարցերին:
- Մշակել և ընդունել հարցադրումների էթիկական և մեթոդաբանական ուղենիշեր:

5. Հարցազրույցի սահմանված տևողության պահպանում

Յուրաքանչյուր հավակնորդի հետ հարցազրույցի առավելագույն տևողությունը մեկուկես ժամ է:[13] Դիտորդության ընթացքում նկատվել են դեպքեր, երբ օրենքով սահմանված ժամային սահմանափակումը գերազանցվել է Խորհրդի կողմից, ինչը կարող է դիտվել որպես ոչ հավասար

---

[12] Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնում թեկնածուի ընտրության մրցութային խորհրդի 17.09.2025 թ. թիվ ՄԽ-Ո-04 որոշում, հավելված, կետ 20:

[13] «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենք, հոդված 10.2, մաս 18:

պայմանների ապահովում և լրացուցիչ հիմք հանդիսանալ Մրցույթի արդյունքների հետագա բողոքարկման համար: Օրենքով սահմանված ժամային սահմանափակման չպահպանման արդյունքում որոշ հավակնորդների առավել շատ հարցեր են տրվել՝ ի համեմատ մյուսների, ինչը ևս Մրցույթի հավասար պայմանների ապահովման տեսանկյունից խնդրահարույց է:

Առաջարկ

- Խստորեն պահպանել օրենքով սահմանված հարցազրույցի առավելագույն տևողությունը՝ ապահովելով հնչեցվող հարցերի հարաբերականորեն հավասար քանակ բոլոր հավակնորդների համար:
- Խորհրդի անդամներին և հավակնորդին Մրցույթի ընթացքում պարբերաբար տեղեկացնել ելույթների, հարցերի և պատասխանների, զեկուցումների համար իրենց հատկացված ժամանակի մասին:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն

Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ